# ՎՐԱՍՏԱՆ

«ՎՐԱՍՏԱՆԻ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 5 - 6 (16604) ՈՒՐԲԱԹ, 19 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԱՅՍ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԵԼ ԵՆՔ ՀԵՏԱՔՐՔԻՐ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱԳԾԵՐ»



*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, ելույթ ունենալով 2018 թվականի կառավարության անդրանիկ նիստում, հայտարարեց, որ այս տարվա համար կառավարությունը ծրագրել է հետաքրքիր ու կարեւոր նախագծեր, այն հաշվով, որպեսզի երկրի քաղաքացիների սպասումներն արդարացվեն:*

Նրա խոսքով, յուրաքանչյուր գերատեսչություն մշակել է իր գործունեության հստակ ծրագիրը, նշել ժամկետները, եւ վստահություն հայտնեց, որ դրանք առաջիկա ժամանակահատվածում կմարմնավորվեն:

- Կառավարությունը, բոլոր գերատեսչությունների ղեկավարները ներկայացրել են 2018 թվականի համար ծրագրված միջոցառումների անցկացման կոնկրետ ժամկետները: Կարծում եմ, որ իրականացվող միջոցառումների արդյունքները կլինեն նշանակալից, ես դրանում համոզված եմ,- հայտարարեց վարչապետը:

## ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՎԵՏՈՆ՝ «ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հերթական անգամ օգտվեց վետոյի իրավունքից եւ այս անգամ արգելք դրեց «Հեռարձակման մասին» օրենքի փոփոխությունների վրա, որոնք նախատեսում են Վրաստանի Հանրային հեռուստատեսությամբ կոմերցիոն գովազդների տեղակայում եւ հեղինակային ծրագրերի հեռարձակում:*



Նշենք, որ Վրաստանի խորհրդարանը վերոնշյալ փոփոխությունները հաստատել է դեկտեմբերի 23-ին: Վրաստանի Հանրային հեռուստատեսությամբ գովազդների տեղակայման իրավունքը հանգեցրեց ոչ կառավարական կազմակերպությունների եւ կոմերցիոն հեռուստաընկերությունների դժգոհությանը:

Վրաստանի նախագահը վետոյի հետ միասին ներկայացրել է երկու հիմնավորված դիտողություն: Նա հույս է հայտնել, որ խորհրդարանն առավել լուրջ մոտեցում կցուցաբերի ներկայացված դիտողություններին եւ հաշվի կառնի օրենքի փոփոխությունների քննարկման ժամանակ:

Նշենք, որ ոչ կառավարական կազմակերպությունները, հանդես գալով վերոնշյալ օրինանախագծի դեմ, հայտարարում են, որ պետական բյուջեից Հանրային հեռուստատեսությանը հատկացվող 52 միլիոն լարին ավելի քան բավական է վերջինիս նորմալ գործունեության համար, եւ գովազդների տեղակայմամբ լրացուցիչ եկամուտների ստացումը Հանրային հեռուստատեսությանը ֆինանսական կանխման մեջ կդնի մասնավոր ընկերություններից եւ ծեռնարկություններից:

## ԴՊՐՈՑ, ՈՐԸ ՆՄԱՆ Է ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ



*Շինարարության ընթացքը՝ 18 ամիս, բացումը՝ 2018 թվականի հունվարի 16: Այս տարեթիվը հավերժորեն կամրագրվի ոչ միայն Ախալքալաքի Գումբուրդո (վրաց.՝ Կումուրդո) գյուղի, այլեւ ողջ երկրի կրթական ոլորտի պատմության մեջ: Եվ ոչ միայն նրանով, որ երկու տասնյակ տարիներից հետո (մինչ այդ ուսումն ընթանում էր վթարային վիճակում գտնվող ակումբի դահլիճում) գյուղն ունեցավ դպրոցական իր շենքը, այլեւ՝ պայմանավորված մի շարք կարեւորագույն հանգամանքներով:*

Ու դրանցից առաջինը երեւի թե այն, որ բազմագործառույթ կրթահամալիրը կառուցվել է ծնունդով Գումբուրդոյից Մղդեսյանների նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ: Կառուցվել է՝ որպես երախտիք ծննդավայրին ու աննախադեպ աջակցություն տեղի ու, բնականաբար, երկրի կրթական մակարդակի բարելավմանը, որովհետեւ միջազգային չափանիշների տեսանկյունից դպրոցը ոչ միայն չի զիջում, այլեւ գերազանցում է երկրի տարածաշրջաններում եղած մյուսներին: Պետությանը նվիրաբերվող եւ այսուհետեւ նրա հաշվեկշռին անցնող դպրոցն ունի մեծ ու փոքր մարզադաշտ, մարզասրահ, լողավազան, լաբորատորիաներ, տարբեր նշանակության դահլիճ-սրահներ, կատարյալ դպրոցական կահավորում... Փաստորեն, ուսումնական հաստատությունը ծառայելու է ոչ միայն աշակերտի առարկայական գիտելիքների ու առողջ կենսակերպի ամրապնդմանը, այլեւ գեղագիտական եւ մշակութային ճաշակի ձեւավորմանը:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

### ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐՆ ՈՒ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

*Հունվարի 15-ին Վրաստանի խորհրդարանում անցկացվեց երկրի պետական դրոշի օրվան նվիրված պաշտոնական ընդունելություն:*



Միջոցառմանը, որին ներկա էին Վրաստանի տարածաշրջանների եւ մունիցիպալիտետների ղեկավարներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, միջազգային եւ տեղական ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մտավորականներ, ելույթ ունեցան Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, օրենսդիր մարմնին առընթեր հերալդիկայի պետական խորհրդի նախագահ Էլդար Շենգելաիան:

Վրաստանի պետական դրոշի օրվան նվիրված միջոցառման մասնակիցների թվում էին Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների քաղաքապետեր եւ սակրեբուլոյի նախագահներ Յուրի Ունանյանը, Անի Մոսոյանը, Նաիրի Իրիցյանն ու Սմբատ Կյուրեղյանը:

*Նկարում.- Իրակլի Կոբախիձեն՝ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի քաղաքապետերի ու սակրեբուլոյի նախագահների հետ*

## ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ ՀՅՈՒՐԸ ԴԵՍՊԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆՆ ԷՐ

*Հունվարի 15-ին տեղի ունեցավ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի անձնակազմի եւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հանդիպումը: Ճանաչողական բնույթ կրող հանդիպումը կայացավ Թբիլիսիի Ալ.Գրիբոյեդովի անվան պետական ռուսական թատրոնի շենքում, ուր ադամյանցիները մինչ վերակառուցման ավարտը ծավալում են իրենց ժամանակավոր գործունեությունը:*



Հայաստանի դեսպանը ծանոթացավ թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների ընթացքին: Դեսպանը հետաքրքրվեց, թե ինչ փուլում են գտնվում վերակառուցման աշխատանքները, հույս հայտնեց, որ մոտ ապագայում արտերկրում գործող միակ պետական հայկական թատրոնի դերասանները հնա-

Դեսպանության կայքի հաղորդմամբ, մինչեւ հանդիպումը,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

*Հունվարի 12-ին Վրաստանի առողջապահության, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Դավիթ Սերգեենկոն հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի ատակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:*



Հանդիպմանը Դավիթ Սերգեենկոն, ընդգծելով վրացի եւ հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը, նշեց, որ առողջապահության բնագավառում վրաց-հայկական փոխադարձ համագործակցությունը եւս երկկողմ հարաբերությունների կարեւոր ուղղություններից մեկն է:

Զրուցակիցները քննարկեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ առողջապահության բնագավա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# ՀԱՀ-Ի ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ ԵՆ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՑ

*Վրաստանի ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեն, հանդես գալով մամլո ասուլիսում, հայտարարել է, որ իր գլխավորած գերատեսչությունը սկսում է գործարարներին վերադարձնել ՀԱՀ-ի հավելավճարները:*



Նրա խոսքով, այդ նպատակով հատուկ ստեղծված ծրագրային ապահովումն ու ենթակառույցը ավտոմատ ռեժիմով կիրականացնի հավելավճարների վերադարձը:

- Ելնելով նրանից, որ համապատասխան ծրագրային ապահովման համար պահանջվում է որոշակի ժամանակ, մենք որոշում ընդունեցինք ծրագրի ստեղծմանը զուգընթաց հիմնել ենթակառույցներ եւ արդեն հաջորդ շաբաթվա սկզբից սկսել դյուրացված ու ազատականացված կարգով վրաց ձեռներեցներին ՀԱՀ-ի հավելավճարի վերադարձման գործընթացը: Սույն որոշման գլխավոր նպատակն այն է, որպեսզի գործարար աշխարհն անմիջականորեն զգա իրականացվող բարեփոխումների դրական արդյունքները: Այն բիզնես-կազմակերպություններին եւ գործարարներին, ովքեր ՀԱՀ-ի հավելավճարների սեփականատերեր են եւ լրիվությամբ բավարարում են Վրաստանի ֆինանսների նախարարության չափորոշիչներին, առաջարկվում են հնգօրյա ժամկետում ներկայացնել դիմումները, իսկ այն ընկերությունները, ում օբյեկտիվ պատճառներից ելնելով անհրաժեշտ է նախապատրաստական ժամանակ, նախարարությունը պատրաստակամություն է հայտնել 14 օրվա ընթացքում վերադարձնել ՀԱՀ-ի հավելավճարների այն գումարը, որոնք օբյեկտիվորեն ձեւակերպված են,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

Վրաստանի բիզնես-ասոցիացիան հանդես եկավ հայտարարությամբ, որով ողջունում է ՀԱՀ-ի հավելավճարների վերադարձմանն ուղղված ֆինանսների նախարարության նախաձեռնությունը:

Ինչպես ասված է ասոցիացիայի հայտարարության մեջ, հավելավճարների ավտոմատ վերադարձման համակարգի ներդրումը դրական քայլ է եւ ողջունելի՝ գործարար շրջանների կողմից, քանի որ դա այն հարցերից մեկն է, որը տարիներ շարունակ անհանգստացնում է գործարարներին բյուրոկրատական արգելքների պատճառով:

# ՎՐԱՍՏԱՆԸ 73-ՐԴՆ Է, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ 57-ՐԴԸ ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԻ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՈՒՄ




*Համաշխարհային տնտեսական ֆորումը (WEF) հաշվարկեց տարբեր երկրներում քաղաքագետների նկատմամբ վստահության մակարդակը:*

Այդ վարկանիշով Վրաստանը 135 եկրների թվում յոթ հնարավորից 2,3 միավորով զբաղեցրեց 73-րդ տեղը, իսկ Հայաստանը՝ 3,2 միավորով, 57-րդն է: Հաշվարկման համաձայն, քաղաքագետներին բոլորից շատ վստահում են Սինգապուրում՝ 6,4 միավոր, Միավորված Արաբական էմիրաթներում՝ 6,3, Նոր Զելանդիայում՝ 6,1, Քաթարում՝ 5,9, Ֆինլանդիայում՝ 5,8, Նորվեգիայում՝ 5,7, Նիդերլանդներում՝ 5,6, Լյուքսեմբուրգում 5,6, Շվեյցարիայում՝ 5,5:

Այլ վարկանիշով Թուրքիան՝ 22,9 միավորով, 70-րդ տեղումն է, Ադրբեջանը՝ 4,7 միավորով, 20-րդը, իսկ Ռուսաստանը՝ 3,4 միավորով, 51-րդն է:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ռում համագործակցության եւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

Խոսելով բժշկական ապահովագրության մասին՝ Ռուբեն Սադոյանը նշեց, որ 2017թ. Վրաստան է այցելել 1,7 միլիոնից ավելի Հայաստանի քաղաքացի, որի մի մասը Վրաստանում եղած ժամանակահատվածում ունեցել է առաջին բուժօգնության կարիք: Այդ առումով, անհրաժեշտ է համապատասխան աշխատանքներ կատարել, որպեսզի այդ հարցը համակարգային լուծում ստանա եւ Հայաստանի քաղաքացիները սահմանված կարգով օգտվեն անհրաժեշտ բուժօգնությունից, ու նույն հնարավորությունները ստեղծվեն նաեւ Վրաստանի քաղաքացիների համար Հայաստանում: Կողմերը պայմանավորվեցին մոտ ապագայում աշխատանքներ կատարել այդ ուղղությամբ:

* * *

Հունվարի 18-ին կայացավ Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիայի հանդիպումը Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:

Հանդիպման սկզբում Ռուբեն Սադոյանը Գիորգի Գախարիային փոխանցեց Հայաստանի ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի ողջույնները:

Անդրադառնալով Վրաստանի եւ Հայաստանի իրավապահ մարմինների միջեւ համագործակցությանը՝ կողմերը խոսեցին երկկողմ ծրագրերի, ինչպես նաեւ դրանց ընդլայնման հնարավորությունների մասին:

Կողմերն, անդրադարձ կատարելով փոխադարձ այցելությունների կարեւորությանը, հույս հայտնեցին, որ մոտ ապագայում տեղի կունենա Վրաստանի ներքին գործերի նախարարի այցը Հայաստան:

# ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ



*Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, դիվանագիտական ընթացակարգով սահմանված ավանդույթի համաձայն, ճանաչողական հանդիպումներ է անցկացնում Վրաստանում հավատարմագրված երկրների արտակարգ եւ լիազոր դեսպանների հետ:*

Առաջին հանդիպումը Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանն անցկացրեց դուայեն (հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ղեկավար, ավագը ըստ դիվանագիտական դասի եւ տվյալ երկրում հավատարմագրման ժամանակի առումով դիվանագիտական ներկայացուցիչ), Վրաստանում Չեխիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Տոմաշ Պերնիցկու հետ:

* * *

Հունվարի 9-ին Վրաստանում Հայաստանի դեսպանը աշխատանքային հանդիպում ունեցավ Վրաստանում ԱՄՆ դեսպան Յան Քելլիի հետ:

Հանդիպմանը Ռուբեն Սադոյանն իր զրուցակցին ներկայացրեց Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունները: Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման առաջմղման ուղղությամբ Հայաստանի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների կողմից գործադրվող համատեղ ջանքերը: Այս առումով, Յան Քելլին նշեց, որ ինքը տեղյակ է զարգացումներից եւ պատմեց իր գործունեության այն շրջանի մասին, երբ ինքն անձամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ էր ԱՄՆ կողմից:

* * *

Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանը ծանոթության բնույթի հանդիպումներ ունեցավ նաեւ Վրաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Սեյեդ Ջավադ Չավանշահիդի, Գերմանիայի դեսպան Հայկե Պայչի հետ:

# ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ ՀՅՈՒՐԸ ԴԵՍՊԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆՆ ԷՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րավորություն կունենան հանդիսատեսին ներկայանալ սեփական, վերանորոգված թատրոնի շենքում:

Խոսելով թատրոնի մասին՝ Ռուբեն Սադոյանը ընդգծեց այն կարեւոր դերը, որ թատրոնն ունեցել է հայ իրականության մեջ, եւ ընդգծեց ներկայումս վիրահայ համայնքի կյանքում թատրոնի ունեցած կարեւոր նշանակությունը:

Իր հերթին, թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը խոսեց թատրոնի գործունեության, բեմադրվող ներկայացումների, առաջիկայում նախատեսված հյուրախաղերի մասին:

Հանդիպման ավարտին Ռուբեն Սադոյանն ընդգծեց, որ Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գործունեությունը մշտապես գտնվելու է Վրաստանում Հայաստանի դեսպանության ուշադրության կենտրոնում:

**Նշենք, որ Պետրոս Ադամյանի անվան հայկական դրամատիկական թատրոնն այս տարի դարձավ 160 տարեկան: Թատրոնի տարեդարձին նվիրված միջոցառումները հետաձգվել են մեկ տարով: 2018թ.-ից, վերակառուցման ավարտից հետո, թատրոնը կշարունակի իր գործունեությունը նոր գաղափարներով, եւ, որ ամենակարեւորն է՝ հայրենի բեմին:**

**Արդեն վեցերորդ տարին է, ինչ թատրոնի շենքը վթարային է, եւ ներկայացումներ չեն բեմադրվում:**



### ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ
### ՊԱՂԵՍՏԻՆԸ ՀՐԱԺԱՐՎԵՑ ՃԱՆԱՉԵԼ ԻՍՐԱՅԵԼԻՆ

*Պաղեստինի ազատագրման կազմակերպության (ՊԱԿ) Կենտրոնական խորհուրդը հունվարի 15-ին, Ռամալլահում կայացած քննարկման ընթացքում, կոչ է արել կասեցնել Իսրայելի՝ որպես պետության ճանաչումը, ի պատասխան Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի որոշման:*

*ՊԱԿ-ի ղեկավար մարմնի հայտարարության մեջ ասված է. «ՊԱԿ-ի Կենտրոնական խորհուրդը Գործադիր կոմիտեին հանձնարարել է կասեցնել Իսրայելի ճանաչումն այնքան ժամանակ, քանի դեռ նա Պաղեստինը պետություն չի ճանաչել 1967 թվականի սահմաններում, չեղյալ չի հայտարարել Արեւելյան Երուսաղեմի անեքսիան եւ չի դադարեցրել գաղութացումը»:*

*Պաղեստինի ազատագրման կազմակերպությունը միջազգային հանրակցության կողմից ճանաչվել է պաղեստինցի ժողովրդի օրինական ներկայացուցիչ: Կենտրոնական խորհուրդը կազմակերպության ընդլայնված ղեկավար մարմինն է, որը գումարվում է Պաղեստինի Ազգային խորհրդի (վտարանդի խորհրդարանի) նստաշրջանների միջեւ:*

### ԱԴՐԲԵՋԱՆ
### ԱՖՂԱՆ ՄՈՒԽՏԱՐԼԸԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ Է 6 ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ՛

*Բաքվի շրջանային դատարանում հունվարի 12-ին տեղի է ունեցել ադրբեջանցի ընդդիմադիր լրագրող, մարդու իրավունքների պաշտպան Աֆղան Մուխտարլըի դատավարությունը: Մուխտարլըին դատապարտվել է 6 տարվա ազատազրկման:*

*Հիշեցնենք, որ լրագրող Աֆղան Մուխտարլըն հայտնի է որպես ադրբեջանական իշխանությունների վարած քաղաքականության քննադատ: 2015 թվականից ի վեր նա ստիպված է եղել բնակություն հաստատել Թբիլիսիում: 2017 թվականի մայիսի 29-ին լրագրողն անհետացել էր Թբիլիսիում, ապա հայտնվել Բաքվում, ինչի կապակցությամբ նրա ընտանիքը դիմել էր ոստիկանություն: Լրագրողին առաջադրվել էր մեղադրանք՝ սահմանն ապօրինի հատելու կապակցությամբ:*

*Եվրախորհրդարանը դեռեւս հունիսի 15-ին Վրաստանի իշխանություններին կոչ էր արել առավել մանրամասն ուսումնասիրել լրագրողի առեւանգումը, իսկ Ադրբեջանին՝ ազատ արձակել ոչ միայն Աֆղան Մուխտարլըին, այլեւ մյուս բոլոր այն ազատազրկված անձանց, որոնք դատապարտված են իրենց կարծիքն արտահայտելու համար:*

### ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ
### Brexit-Ի ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱԳԻԾՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

*Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Համայնքների պալատն ընդունել է Միացյալ Թագավորության տարածքում համաեվրոպական օրենսդրության չեղարկման օրինագիծը:*

*Կառավարության կողմից ներկայացված օրինագծի օգտին, որը պետք է Եվրամիության օրենքները փոխարինի ներքին բրիտանական օրենքներով, այն բանից հետո, երբ երկիրը 2019 թվականի մարտին դուրս կգա Եվրամիության կազմից, քվեարկել է 324 պատգամավոր: Դրա դեմ հանդես է եկել 295 ժողովրդական ընտրյալ:*

*Այս քվեարկությունից հետո, օրինագիծը կներկայացվի Լորդերի պալատի քննարկմանը:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

## ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ ԱՆՑԵԼ Է ՆԱԽԱԳԱՀԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ



***Քաղաքացիության հարցերով հանձնաժողովը Վրաստանի արդարադատության նախարարության պետական սպասարկումների զարգացման գործակալությունից անցել է Վրաստանի նախագահի վարչակազմի իրավասության ներքո:***

Ինչպես հայտարարել է Վրաստանի արդարադատության նախարարար Թեա Ծուլուկիանին, անցած տարվա վերջին երկրի նախագահի կողմից իրականացված փոփոխությունների արդյունքում, վրացական քաղաքացիության շնորհման հարցերը լուծելու են նախկին չորսի փոխարեն վեց անդամից կազմված հանձնաժողովում, որը գլխավորելու է նախագահի վարչակազմի ներկայացուցիչը: Երկրի նախագահը, բացի հանձնաժողովի ղեկավարից, հանձնաժողովում կունենա եւս երկու ներկայացուցիչ՝ իր վարչակազմից ու ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմից:

Նշենք, որ վերոնշյալ փոփոխությունը ուժի մեջ է մտել հունվարի 15-ից:

Նշենք, որ 2017 թվականին Վրաստանի քաղաքացիություն է շնորհվել շուրջ 3 հազար օտարերկրացու:

Վրացական քաղաքացիության հարցերով հանձնաժողովի հաշվետվության համաձայն, 2017 թվականի հունվարի 1-ից հոկտեմբերի 9-ը հանձնաժողովը քննարկել է քաղաքացիության ստացման 5321 դիմում, որից 3097-ը բավարարվել է եւ հանձնարարականով ներկայացվել Վրաստանի նախագահի հաստատմանը:

Դիմում ներկայացրած 3097 հայցորդներից 2550-ը կա՛մ ծնվել է Վրաստանում (1945 անձ), կա՛մ ծնվել եւ եղել են Վրաստանի նախկին քաղաքացիներ (1072 անձ), կա՛մ եղել են Վրաստանի քաղաքացու ընտանիքի անդամ:

Նախագահին ներկայացված հանձնարարականներով, վրացական քաղաքացիություն է շնորհվել 3 հազար օտարերկրացու, մերժվել՝ 97 հայցորդների դիմումները: Մերժված քաղաքացիներից 70-ը ծնվել է Վրաստանում, 27-ը Վրաստանի նախկին քաղաքացիներ են կամ Վրաստանի քաղաքացու ընտանիքի անդամներ:

Վերոնշյալ 3097 անձից 2363-ը՝ ետխորհրդային տարածքի պետությունների քաղաքացիներ են, 277-ը՝ Եվրամիության անդամ երկրների քաղաքացիներ, 219-ը՝ լատինաամերիկյան, 221-ը՝ ասիական երկրների, 5-ը՝ աֆրիկյան, 11-ը՝ այլ երկրների քաղաքացիներ, իսկ մեկը՝ արաբական երկրի ներկայացուցիչ:

## ՕՄԲՈՒԴՍՄԵՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻՆ

***Վրաստանի ժողովրդական պաշտպան Նինո Լոմջարիան հանրությանը ներկայացրեց օմբուդսմենի տեղակալներին: Նրա ներկայացմամբ, օմբուդսմենի առաջին տեղակալը Թամար Գվարամաձեն է, տեղակալներ՝ Գիորգի Բուրջանաձեն եւ Էկա Սխիլաձեն:***



Տեղակալների ներկայացման արարողությանը Նինո Լոմջարիան շնորհակալություն հայտնեց օմբուդսմենի նախկին աշխատակազմի աշխատակիցներին:

Օմբուդսմենի առաջին տեղակալի պաշտոնում ներկայացված Թամար Գվարամաձեն Թբիլիսիի պետական համալսարանի իրավունքի դոկտոր է եւ ասոցիացված պրոֆեսոր: Նա երկար տարիներ՝ որպես փաստաբան, աշխատել է մարդու իրավունքների հարցերով: Գիորգի Բուրջանաձեն երկար տարիներ աշխատել է երիտասարդ իրավաբանների ասոցիացիայում եւ «Բաց հասարակություն-Վրաստան» հիմնադրամում:

Նախորդ աշխատակազմի իր պաշտոնը պահպանել է Էկա Սխիլաձեն, ով 2013 թվականից աշխատում է օմբուդսմենի աշխատակազմում:

## ԲԱՐՁՐԱՑՎԵՑԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՍԱԿԱԳՆԵՐԸ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովի կողմից ընդունվել է որոշում էլեկտրաէներգիայի եւ ջրի սակագնի ավելացման մասին:***

Մասնավորապես, ԹԵԼԱՍԻ-ի կողմից սպասարկվող Թբիլիսիում, հունվարի 1-ից էլեկտրաէներգիայի սակագինը ավելացվել է 1,5635 թեթրիով: Այսպիսով, ավելացումը կազմեց 6,8-ից մինչեւ 10,7 տոկոս: Իսկ Էներգոպրո Ջորջիա ընկերության աբոնենտների համար սակագինը ավելացվել է 1,228 թեթրիով:

Այսպիսով, մինչեւ 101 կիլովատտ ժամ էլեկտաէներգիա սպառողների սակագինը 1 կիլովատտ ժամի համար 12,957-ից հասցվել է՝ 14,237 թեթրիի, 101-ից մինչեւ 301 կիլովատտ ժամ էլեկտրաէներգիայի սակագինը 16,933-ից հասցվել է 18,213 թեթրիի, իսկ 301 եւ ավելի կիլովատտ ժամ էլեկտրաէներգիայի սակագինը՝ 21453-ից՝ 22,733 թեթրիի:

1,228 թեթրիով ավելացվել է նաեւ Վրաստանի տարածաշրջաններում գործող կոմերցիոն հատվածի էլեկտրաէներգիայի սակագինը:

Ինչ վերաբերում է ջրի սակագնին, ապա այն ավելացվել է Թբիլիսիի, Մցխեթայի եւ Ռուսթավիի բնակիչների համար:

Թբիլիսիում մարդահաշվով սակագինը ավելացվել է 0,74 լարիով, իսկ Մցխեթայում՝ 1,48, Ռուսթավիում՝ 0,08 լարիով: Այսպիսով, Թբիլիսիի աբոնենտները մարդահաշվով տրվող 3,147-ի դիմաց վճարելու են՝ 3,892 լարի: Ավելացումը կազմել է 19,28 տոկոս: Ռուսթավիում սակագինը 25,201-ից հասցվել է 2,281-ի, իսկ Մցխեթայում՝ 2,408-ից մինչեւ 3,888 լարի:

Հաշվիչներով ջրի սակագինը մուծող աբոնենտների համար մեկ խորանարդ մետր ջրի գինը, 0,266-ի փոխարեն, կկազմի 0,326 լարի:

Նշենք, որ Թբիլիսիում կոմերցիոն հատվածի համար հաշվիչներով վճարվող ջրի սակագինը՝ 4,41-ից նվազեցվել է մինչեւ 4,40 լարի:

Հիշեցնենք, որ վերոնշյալ սակագները կգործեն մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏԸ ԿԱԶՄԵՑ 2,7 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

### ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹՎՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԻՆՆ Է

***2017 թվականին Վրաստան այցելել է ավելի քան 7,5 միլիոն միջազգային այցելու, ինչը 18,8%-ով ավելի է, քան 2016 թվականին, ինչը համարվում է ռեկորդ Վրաստանի համար: Քանակի առումով, առաջին տեղը զբաղեցնում են Հայաստանից ժամանած զբոսաշրջիկները:***

Վրաստանի զբոսաշրջության ազգային վարչության տվյալներով, 2017 թվականին երկիր ավելի քան 1,7 մլն այցելու է եկել, ինչը 14%-ով աճել է 2016 թ. տվյալների համեմատ: 2017 թվականին միջազգային այցելուների զբոսաշրջիկների թիվը Վրաստանում կազմել է ավելի քան 3 միլիոն 478 հազար մարդ, ինչը 27,9 տոկոսով ավելին է, քան 2016 թվականին:

Երկրորդ տեղում, Ադրբեջանից ժամանած զբոսաշրջիկներն են՝ 1,69 մլն, տոկոսային աճը կազմել է 11%: Զբոսաշրջիկների քանակի թվում լավագույն հնգյակում են Ռուսաստանը՝ 1,39 միլիոն այցելու (34 տոկոս աճ), Թուրքիան՝ 1,24 միլիոն այցելու (0.8 տոկոս աճ), Իրանը՝ 322 հազար այցելու (118 տոկոս աճ): Զբոսաշրջիկների քանակով տասնյակում են այն երկրներ, ինչպիսիք են Ուկրաինան, Իսրայելը, Հնդկաստանը, Ղազախստանը եւ Սաուդյան Արաբիան:

2007 եւ 2013 թթ. այցելուների միջին տարեկան աճը կազմել է 30%: Ամենաբարձր աճը գրանցվել է 2012 թվականին՝ 56%: 2013 թվականին այցելուների թիվը աճել է 21%-ով:

Վրաստան մուտք գործելու եւ մուտքի արտոնագրային ռեժիմի մի շարք երկրների, այդ թվում՝ Իրանի հետ կանոնակարգի խստացման պատճառով, 2014 թվականը զբոսաշրջության առումով անարդյունավետն էր, իսկ զբոսաշրջիկների աճը կազմել է ընդամենը 2,3%: 2015 թվականին աճը գրանցվել է 7%, 2016-ին՝ 7,6%, իսկ 2017-ին Վրաստան այցելող միջազգային այցելուների թիվը աճել է 18,7%-ով:

Ավելացնենք, որ անցած տարի զբոսաշրջության ոլորտից Վրաստանը ստացել է 2,7 միլիարդ դոլարի եկամուտ: Միայն դեկտեմբերին այն կազմել է 180 միլիոն դոլար, ինչը 33 միլիոնով գերազանցում է նախորդ տարվա համապատասխան ժամանակամիջոցի ցուցանիշը: Թեպետ այդ առումով ռեկորդային է համարվում օգոստոսը. եկամուտները կազմեցին 395 միլիոն դոլար:



### ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԴԱՐՁԱՎ ՀԱՅՐ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ նրա կինը՝ նկարչուհի եւ դերասանուհի Մակա Չիչուան, երկրորդ որդին են ունեցել: Այդ մասին հայտնել է պետության ղեկավարը Facebook սոցցանցի իր էջում:*

*«Ծնվել է Թոմա Մարգվելաշվիլին»,- գրում է նախագահը: Նախագահի վարչակազմում լրագրողներին հայտարարել են, որ նորածինը լույս աշխարհ է եկել հունվարի 15-ին, Թբիլիսիի Գուդուշաուրիի կլինիկայում, նրա քաշը 2,950 կիլոգրամ է: Մայրն ու որդին իրենց լավ են զգում:*

*Մարգվելաշվիլին հայր է դարձել երրորդ անգամ, նա եւ Մական արդեն ունեին ընդհանուր երեխա՝ երեք տարեկան Թեյմուրազը: Նախագահը նաեւ չափահաս դուստր ունի առաջին ամուսնությունից: Նրա անունը Աննա է:*

### ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ 15 ՄԼՆ ԴՈԼԱՐ

*Պետությունն ավելի քան 39,1 միլիոն լարի (ավելի քան 15,1 միլիոն դոլար) կհատկացնի 2018 թվականին Վրաստանում կայանալիք նախագահական ընտրությունների համար:*

*Ընտրական միջոցառումների վրա կծախսի 28,2 մլն լարի (մոտավորապես՝ 11 մլն դոլար), ընտրություններում աշխատողներին պատրաստելու վրա՝ ավելի քան 1 մլն լարի (ավելի քան 387 հազար դոլար): Ընտրական սուբյեկտների հեռուստատեսային գովազդի ծախսերը կգերազանցեն 2,2 մլն լարին (ավելի քան 866,1 հազար դոլար), իսկ ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների ֆինանսավորումը՝ 7,6 մլն լարին (ավելի քան 2,9 մլն դոլար): Վրաստանի հինգերորդ նախագահի ընտրությունները պետք է տեղի ունենան 2018 թվականի հոկտեմբերին:*

### ՀՐԱԶԵՆԻ ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

*Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Ասպինձայի, Ախալքալաքիի եւ Ախալցիխեի շրջանների բնակիչները տեղի ոստիկանական բաժանմունքին կամավոր հանձնել են տարբեր տեսակի հրազեն, պայթուցիկ նյութեր, զինամթերք: Մասնավորապես, հանձնվել է մի ինքնաձիգ, երեք կարճափող հրացան, երեք ատրճանակ, տարբեր տրամաչափի 427 փամփուշտ, ձեռքի 20 նռնակ, չորս նռնականետ, հակատանկային երկու ական, հակատանկային արկ եւ այլն: Վերոնշյալ անձինք, Վրաստանի քրեա-դատավարական օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն, ազատվել են պատասխանատվությունից:*

### ՌՈՒՍԹԱՎԻՈՒՄ ՍՊԱՆՎԵԼ Է ՆԱԽԿԻՆ ԳԵՆԵՐԱԼԸ

*Հունվարի 16-ին իր առանձնասենյակում սպանված են հայտնաբերել Ռուսթավիում գործող «Ստամբուլի շուկայի» համասեփականատերերից մեկի՝ Վրաստանի ազգային գվարդիայի գեներալ Սոսո Քութաթելաձեի դին: 54-ամյա Սոսո Քութաթելաձեն 1991 թվականից տարբեր պաշտոններ է զբաղեցրել Վրաստանի զինված ուժերում: 2004-2006 թթ. եղել է ազգային գվարդիայի գեներալ, 2008 թվականին ընտրվել է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր:*

# ԴՊՐՈՑ, ՈՐԸ ՆՄԱՆ Է ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



Ուստի, Գումբուրդոյի դպրոցի նորօրյա էջը, տոնական լինելուց բացի, պատմական էր նաեւ: Բացելով հանդիսավոր արարողությունը՝ Ախալքալաքի հանրակրթական ռեսուրս-կենտրոնի պետ Թերեզա Չիվչյանը շնորհավորեց ներկաներին ու երախտիքի իր խոսքն ուղղեց բարերարներին: Օրվա առիթով Գումբուրդո էին ժամանել Վրաստանի կրթության ու գիտության նախարար Միխեիլ Չխենկելին, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Հենզել Մկոյանը, Դավիթ Ճիճինաձեն, Սամվել Մանուկյանը, Ռուսլան Պողոսյանը, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի նահանգապետ Ակակի Մաճուտաձեն, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի քաղաքապետեր Յուրիկ Ունանյանը եւ Անի Մոսոյանը, սակրեբուլոների նախագահներ Նաիրի Իրիցյանը եւ Սմբատ Կյուրեղյանը, Վրաստանի ԿԳ փոխնախարար Լիա Գիգաուրին, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, «Վրաստան-Հայաստան» գործարարների միության նախագահ Սամվել Աղեկյանը:



Դպրոցի բացման արարողությանը մասնակցում էին նաեւ Հայաստանից, Ռուսաստանից եւ այլ երկրներից ժամանած, ծնունդով ջավախեթցիներ, խոշոր ընկերությունների ներկայացուցիչներ Արմեն Մկոյանը, Հայկ Մղդեսյանը, Սայադ Շիրինյանը, Ռոմիկ Բալոյանը եւ ուրիշներ:

Բարերարներին ուղղված իր գնահատանքի ու շնորհակալական խոսքում, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարը հիացմունքն արտահայտեց դպրոցական շենքի կատարելության ու նշանակության մասին եւ առաջնահերթորեն շնորհավորեց հենց աշակերտներին: Նա հույս ու ցանկություն հայտնեց, որ նորակառույց շենքը հիմնաքար կդառնա ողջ երկրի կրթական կառույցները հենց այսպիսին տեսնելու առումով:

- Մեծ պատիվ ունեմ մասնակցելու այս պատմական իրադարձությանը, երբ բացվում է մի հրաշակերտ ու բարձրորակ դպրոց, ուր կան բոլոր պայմանները աշակերտների գերազանց ուսումնառության եւ առողջ ապրելակերպն ապահովելու համար,- իր խոսքում ընդգծեց նա:



Ըստ նախարարի, ենթակառույցի բարելավմանը զուգահեռ, առավել ուշադրություն կհատկացվի տարածաշրջանի կրթական որակի բարձրացմանը: Այդ ուղղությամբ արդեն իսկ մշակվել են ծրագրեր եւ նորարարություններ: Կատարելագործվում են մանկավարժներն ու առավել բարձր հարթակ է բարձրացվում վրաց լեզվի ուսուցումը:

Խոր ու կայուն գիտելիքներ պաշարելու եւ երկրի կյանքին ինտեգրվելու կոչով ու նաեւ հովանավորներին ուղղված ջերմ խոսքով էին լի Ակակի Մաճուտաձեի եւ Յուրիկ Ունանյանի ելույթները:

Իր խոսքում թեմակալ առաջնորդ Վազգեն սրբազան Միրզախանյանը աղոթքով օրհնեց բարեգործ ընտանիքը եւ նշեց, որ այս հոյակերտ գիտության տաճարը եւս մեկ ապացույց է հայ ու վրաց ժողովուրդների բարեկամության եւ կրթության հանդեպ մեծ սիրո:



Հանդիսավոր պայմաններում, Շուշանիկ Մղդեսյանին, ում ընտանիքի նախաձեռնությամբ ու ֆինանսական աջակցությամբ իրականացվել է կրթօջախի շինարարությունը, Ախալքալաքի սակրեբուլոյի պատգամավոր Գումբուրդոյից Աշոտ Սարյանը եւ Գումբուրդոյի գյուղապետ Արթուր Կուրղինյանը հանձնեցին Հայաստանի սփյուռքի նախարարության ոսկե մեդալ: Նախարարության արծաթե մեդալով պարգեւատրվեցին նաեւ կառույցի ճարտարապետ Ռուբեն Եղիազարյանն ու ինժեներ Միսակ Կուրղինյանը:



Եվ վերջապես միջոցառման կիզակետը. ժապավենի կտրման արարողությունը, որ վստահվել էր բարերար տիկին Շուշանիկին, նախարար Միխեիլ Չխենկելուն եւ նահանգապետ Ակակի Մաճուտաձեին: Այնուհետեւ հյուրերը շրջայց կատարեցին նորակառույց շենքում:



Տիկին Շուշանիկը խոստովանեց. դպրոցի կառուցման նպատակը մեկն է ու շատ հստակ՝ մեր երեխաները պետք է սովորեն ու լավ մարդիկ դառնան: Հենց այս նշանաբանով էլ, ըստ դպրոցի տնօրեն Արմենակ Փոլոսյանի, Գումբուրդոն թեւակոխում է իր 2017/2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակը:

- 1700 քառակուսի մետր զբաղեցնող դպրոցական շենքը նախատեսված է մոտ 400 աշակերտի համար,- մեզ հետ զրույցում ասում է դպրոցի տնօրենը:- Ունի 18 դասասենյակ, որից յուրաքանչյուրը զբաղեցնում է 50 քառակուսի մետր տարածք, շենքի սեյսմակայունությունը 10 բալ է: Դպրոցն ունի ֆուտբոլի եւ այլ մարզաձեւերի համար նախատեսված խաղահրապարակներ: Լողավազան, որի երկարությունը կազմում է 18, լայնությունը՝ 8, խորությունը՝ 1,50-1,80 մետր: Մենք ունենալու ենք հարուստ գրադարան, ժամանակակից տեխնիկա, ընթերցասրահ, քիմիայի, մաթեմատիկայի եւ գրականության հատուկ դասասենյակներ, հանդիսության, ուսուցիչների հանգստի եւ խորհրդակցությունների դահլիճներ, չզարմանաք՝ նաեւ 14 զուգարան: Ուրախությամբ փաստեմ, որ հագեցած ենք ժամանակակից տեխնիկայով ու անհրաժեշտ այլ պարագաներով:



Դպրոցում, ուր, ըստ նախատեսվածի, գործելու են



նաեւ տարբեր մշակութային եւ գիտական խմբակներ, արդեն մեկնարկել են դասերը: Այստեղ ուսանում է 320 աշակերտ, գյուղի բնակչության ընդհանուր թիվը հասնում է երեք հազարի: Գումբուրդոն բարձրադիր Ախալքալաքի տարածաշրջանի այն համառ գյուղերից է, ուր արտագաղթը համեմատաբար նվազ թիվ է կազմում: Վերաբնակիչ հայերն այստեղ գաղթել են Էրզրումից եւ կերտել իրենց մշակույթն ու հոգեւոր կյանքը՝ հավատարիմ մնալով ազգային ավանդույթներին ու Վրաստանի օրինավոր քաղաքացու դիրքորոշմանը:

Նման դպրոցի կառուցման փաստը աննախադեպ է, թեեւ ծնունդով ջավախեթիից այլ բարերարների կողմից իրականացվել են այլ շինարարություններ եւս: Ուրախալի է, որ այժմ շինարարության առանցքում հայտնվել է դպրոցը, ասել է թե՝ խարիսխը ապագայի ու յուրաքանչյուրիս: Լիահույս ենք, որ Մղդեսյանների ու նրա համախոհների այս քայլը իր վարակիչ ազդեցությունը կունենա երկրի ինչպես այս, այնպես էլ՝ մյուս հատվածներում, դրանով ոչ միայն



ամրացնելով երկիր-քաղաքացի փոխհարաբերությունը, այլեւ ամրապնդելով ազգային ինքնությունն ու Վրաստանի լիարժեք քաղաքացու իրավունքը: Իսկ այս պարագայում, երեւի թե ամենակարեւորը, դպրոցում մայրենիին զուգահեռ պետական՝ վրաց լեզվի ինտենսիվ ուսումնառումն է:



Գումբուրդո գյուղի նոր հանրային դպրոցի բացման արարողությանը մասնակցելու նպատակով, Միխեիլ Չխենկելին, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, փոխնախարար Լիա Գիգաուրին հանդիպում ունեցան Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների առանձին հանրային դպրոցների տնօրենների եւ մանկավարժների հետ:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների հանրակրթական ռեսուրս-կենտրոնների պետեր Թերեզա Չիվչյանն ու Դավիթ Ջեդգենիձեն:

***«Վրաստան» թերթը շնորհավորում է դպրոցի մանկավարժներին ու ծնողներին, եւ, ինչ խոսք, աշակերտներին: Հիմա արդեն ձեր հերթն է: Հայտնի խոսք է, առաջարկը պահանջարկ է ծնում, այժմ արդեն դպրոցի արտաքինը պետք է իր համապատասխան ներքին որակն ունենա: Անտարակույս, այդպես էլ լինելու է: Նման պատասխանատու առաքելության մեջ՝ ձեզ անսպառ եռանդ ու պսակվող հաջողություններ:***

***ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ***
*Լուսանկարները՝ JNEWS-ի եւ «Վրաստան» թերթի*